

ՀՀ ԳԱԱ ՀՐ. ԱՃԱՌՑԱՆԻ ԱՆՎԱՆ ԼԵԶՎԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ՌՈԶԱ ՎԱԼԵՐԻԿԻ ԶԱՂԱՑՊԱՆՅԱՆ

**ԱՆԳԼԵՐԵՆԻ ՑԱՎԱՆԻՇ ԲԱՅԵՐԻ ԲԱՌԱԿԱԶՄԱԿԱՆ ԲՆԵՐԻ
ԼԵԶՎԱՃԱՆԱԶՈՂԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆԸ
ՀԱՅԵՐԵՆԻ ԵՎ ՌՈՒՍԵՐԵՆԻ ԶՈՒԳԱԴՐՈՒԹՅԱՄԲ**

**Ժ.02.03. «Համեմատական եվ տիպաբանական լեզվաբանություն»
մասնագիտությամբ բանասիրական գիտությունների թեկնածուի
գիտական աստիճանի հայցման ատենախոսության**

ՍԵՂՄԱԳԻՐ

ԵՐԵՎԱՆ 2013

Ատենախոսության թեման հաստատվել է Երևանի Վ.Բրյուսովի անվան պետական լեզվաբանական համալսարանում:

Գիտական ղեկավար՝

բանասիրական գիտությունների դոկտոր,
պրոֆեսոր Կ.Շ. Աբրահամյան

Պաշտոնական ընդդիմախոսներ՝

բանասիրական գիտությունների դոկտոր,
պրոֆեսոր Լ.Գ. Բրուսյան

բանասիրական գիտությունների
թեկնածու Ա.Ս. Գալստյան

Առաջատար կազմակերպություն՝


Երևանի պետական համալսարան

Ատենախոսության պաշտպանությունը կայանալու է 2014թ. հունվարի 27-ին՝ ժամը 15⁰⁰-ին, ՀՀ ԳԱԱ Հր. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտում գործող ԲՈՀ-ի Լեզվաբանության 019 մասնագիտական խորհրդի նիստում:
Հասցեն՝ 0015, Երևան, Գրիգոր Լուսավորչի 15:

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ ՀՀ ԳԱԱ Հր. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտի գրադարանում:

Սեղմագիրն առաքված է 2013թ. դեկտեմբերի 16 -ին:

Մասնագիտական խորհր
գիտական քարտուղար



իրական գիտությունների
թեկնածու, դոցենտ Ն.Մ. Միմոնյան

Ժամանակակից լեզվաբանությունը բնութագրվում է նոր գիտական հարա-
ցույցի ստեղծմամբ, որին հատկանշական է լեզվի նկատմամբ մարդակենտրոն,
մշակութաբանական և ճանաչողական մոտեցումների դերի աճը, որի հետևանքով
արդիական է դառնում «մարդը լեզվի մեջ» և «լեզուն մարդու մեջ» հիմնախնդիրը¹:
Մարդակենտրոնության սկզբունքը չի կարող չդրսևորվել լեզվի մեջ, քանի որ
լեզվական գործունեությունն ուղղված է դեպի մարդը:

Մարդու կողմից աշխարհի յուրացումն սկսվում է լեզվի յուրացմանը
գուզնրթաց: Մարդն առաջին հերթին գիտակցում է իր մեջ և շուրջը գտնվող այն
առարկաները, երևույթներն ու գործընթացները, որոնք անմիջականորեն ազդում
են նրա ինքնազգացողության վրա:

Ցավն այն առաջնային զգացողություններից է, որոնք պայմանավորում են
կյանքի վերաբերյալ մարդու պատկերացումները, նրա նյութական և բարոյական
արժեքները: *Ցավի* փորձը, սկսվելով ֆիզիկական զգացողություններից,
տարածվում է նաև միջանձնային և հասարակական հարաբերությունների վրա:
Ցավն, այդպիսով, կենսահանրահոգեբանական երևույթ է²:

Գիտակցության ոլորտում կարելի է խոսել ցավի կարգի մասին, որը լեզվա-
գիտակցության մեջ դրսևորվում է որպես լեզվական կարգ՝ դառնալով
շրջապատող աշխարհի հասկացության մաս: «*Ցավ*» երևույթը սահմանելով
որպես լեզվական կարգ՝ մենք գիտակցում ենք, որ յուրաքանչյուր ազգային լեզու և
մշակույթ իրենց հետքն են թողնում անհատի կողմից *ցավի* ընկալման վրա:
Ուստի ցավի ընկալումը, իմաստավորումը, արտահայտումն ու հաղթահարումը
ձևավորվում են տվյալ հասարակության մեջ գոյություն ունեցող և տվյալ լեզվում
ամրագրված կարծրատիպերի հիման վրա:

Լինելով անձնական, ներքին իրադարձություն, որն ուղղակի կերպով
դիտարկելի չէ, *ցավի* գնահատումը հաճախ կառուցվում է վերջինս զգացող
սուբյեկտի խոսքարտահայտման հիման վրա: Հետևաբար ցավի արտա-
հայտությունն այնքան ուղղակիորեն և սերտորեն է կապված լեզվի հետ, որ լեզուն
ոչ միայն հաստատում է *ցավի* առկայությունը և նկարագրում այն, այլև *ցավի*
զգացողության մաս է դառնում³:

Ցավի երևույթը և հատկապես ցավի զգացողությունների լեզվականացումն
ունի ուսումնասիրության բավական լուրջ պատմություն: Այս առումով
հատկապես կարևորվում են Լ. Վիտգենշտայնի, Գ.Խայդարովայի, Ֆ. Գաստոն-
Յոհանսոնի և Ջ. Օլվոլդի, Դ.Էգյուրի և Հ. Մերսկու, Կ. Բելլիի և Պ. Դեվիդսոնի, Ռ.
Մելզաքի և այլոց աշխատությունները, որոնք ներկայացնում են ցավ

¹ Арутюнова Н., Язык и мир человека.- М.: Яз. рус. культуры, 1999. -895 с. : 182:
² Чижова Х., Языковая категория боль в русском языковом сознании. Лінгвістика № 2 (20), 2010 А.
Schopenhauer's sämtliche Werke / Hrsgn. v. Julius Frauenstädt. 2. Aufl: Neue Ausgabe. Bd.2. - Leipzig:
Brockhaus, 1891. - 567 с.: 87:
³ Lascartou Ch., The Language of Pain: Expression Or Description?, -Amsterdam: John Benjamins
publishing, 2007. -237 p.: 20:

հասկացության լեզվական կողմի գանազան հայեցակերպեր: Սակայն քանի որ վերոնշյալ հետազոտությունները կատարվել են հիմնականում փիլիսոփայության, բժշկության, հոգեբանության (այդ թվում նաև՝ հոգեբուժության) ոլորտում, դրանք չեն կարող օբյեկտիվ հիմք հանդիսանալ լեզվաբանական ուսումնասիրությունների համար:

Ահա թե ինչու ճանաչողական լեզվաբանության շրջանակներում «*ցավ*» երևույթի և նրա լեզվականացման հարցերի առավել ճշգրիտ պատասխաններ գտնելու համար հարկավոր է դիմել նախ բառարանային սահմանումներին, ապա լեզվակիրների ավելի լայն և ընդհանրական խմբերի հարցումների արդյունքներին, ինչպես նաև տվյալ լեզվով գեղարվեստական գրականության օրինակների ուսումնասիրությանը՝ չանտեսելով նաև այլ գիտական ոլորտների ուսումնասիրությունների արդյունքները:

Թեև *ցավի* կարգայնացման խնդիրն առավել հետաքրքրություն է ներկայացնում լեզվաբանության համար, քանի որ ինչպես արդեն ասվեց, *ցավի* վերիֆիկացման միակ միջոցը նրա բառային նկարագիրն է, սակայն, ի տարբերություն գիտության վերը թվարկած ոլորտների, այս իմաստային դաշտի գուտ լեզվաբանական հետազոտությունները եզակի բնույթ են կրում և ներկայացնում են մասնավոր մոտեցումներ: Այս առումով հատկապես կարևորվում են Մ. Հալիդայի, Խ. Չիժովայի, Ա. Բոնչ-Օսմոլովսկայայի, Ե. Ռախիլինայի և Տ. Ռեզնիկովայի աշխատությունները: Հարկ է նշել, որ առկա աշխատություններն իրենց գիտական մեծ ներդրումով հանդերձ լիարժեք պատկերացում չեն տալիս *ցավի* լեզվականացման խնդրի մասին այն պատճառով, որ ուսումնասիրում են միայն *ցավանիշ* բառերի որոշ իմաստային հատկանիշներ: Ինչ վերաբերում է ճանաչողական տեսանկյունից մեծ կարևորություն ունեցող՝ բառակազմական հնարավորությունների վերլուծությանը, ապա պետք է նշել, որ սույն ատենախոսությունն առաջին նման փորձն է իր տեսակի մեջ, որով էլ պայմանավորված է նրա **արդիականությունը**:

Ատենախոսությունը ներկայացնում է *ցավի* լեզվական կարգայնացմանն ուղղված հետազոտության արդյունքները հնդեվրոպական լեզվաընտանիքի երեք ցեղակից հեռավոր ճյուղերի պատկանող՝ անգլերեն, հայերեն և ռուսերեն լեզուներում:

Սույն **ուսումնասիրության նյութ** են անգլերենի 83, հայերենի 68, ռուսերենի 37 արմատական այն բայերը (և դրանց ածանցյալները, համապատասխանաբար՝ անգլ.՝ 517, հայ.՝ 439, ռուս.՝ 576), որոնք ուղիղ կամ փոխաբերական իմաստով (1 - 4 իմաստներով) *ցավանիշ* են ըստ իրենց բառարանային սահմանման կամ համապատասխան ազգային կորպուսների տվյալների⁴: Բայերի *ցավանիշությունը* սահմանվում է որպես սուբյեկտի կողմից *ցավի* նկարագրում կամ արտահայտում (հիմնականում ներառվել են անանցողական բայեր):

Ուսումնասիրության մեջ չեն ընդգրկվել այն բայերը (հիմնականում անցողական), որոնք ուղղակի կամ անուղղակիորեն արտահայտում են *ցավի*

⁴ Տե՛ս BNC, ԱՐԵՎԱԿ, ՀԿՐԿ:

պատճառում այլ սուբյեկտի կամ արտաքին ուժերի կողմից, քանի որ դրանք պատկանում են մեկ այլ՝ այսպես կոչված «ավերման» բայերի (ինչպես օր.՝ կտրել, խփել, ծակել և այլն) բառիմաստային խմբին, որն արդեն իսկ բավական հանգամանորեն ուսումնասիրված է թե՛ հայրենական և թե՛ արտասահմանյան լեզվաբանների կողմից⁵:

Ուսումնասիրվող բայերը հավաքվել և ճշգրտվել են **անգլերենի՝** “Oxford Advanced Learner’s Dictionary of Current English”, “Webster’s New Dictionary of Synonyms”, “Roget’s Thesaurus of English Words and Phrases”, “Collins Cobuild Advanced Learner’s English Dictionary” և այլ բառարաններից, **հայերենի՝** Է. Աղայանի «Արդի հայերենի բացատրական բառարանից», «Մամանակակից հայոց լեզվի բացատրական բառարանից» (քառահատոր), ինչպես նաև Գ. Ջահուկյանի «Մամանակակից հայոց լեզվի իմաստաբանություն և բառակազմություն» գրքից: **Ռուսերենի** նյութը վերհանվել է հետևյալ բառարաններից՝ Օжегов С., Шведова Н. “Толковый словарь русского языка”, Евгеньева А. “Словарь русского языка”, Ефремова Т. “Новый словарь русского языка. Толково-словообразовательный”, “Толковый словарь русского языка” под редакцией Д. Ушакова, Тихонов А. “Словообразовательный словарь русского языка (в 2-х т.)” և այլն:

Հետազոտության նպատակն է արմատական բայերի բառակազմական բների վերլուծության հիման վրա կատարել «ցավ» երևույթի լեզվական, այն է՝ իմաստաբանական և բառակազմական կարգայնացում: Այդ նպատակով առաջադրվել են հետևյալ կոնկրետ խնդիրները.

- 1) առանձնացնել ցավանիշ բայերի բառիմաստային խումբը անգլերենում, հայերենում և ռուսերենում, կատարել դրանց իմաստաբանական դասակարգում,
- 2) կազմել ցավանիշ բայերի բառիմաստային ենթախմբերի անդամների կոնկրետ բառակազմական բները՝ դրանց վերլուծությունը կատարելով ըստ խոսքիմասային գոտիների (գոյականական, ածականական, բայական, մակբայական), ինչպես նաև ըստ դրանցում ներկայացված բառակազմական իմաստների (ԲԲ),
- 3) բացահայտել յուրաքանչյուր բառակազմական իմաստի իրացման կապը սերող բայերի բառիմաստային առանձնահատկությունների հետ, ինչպես նաև ուսումնասիրել կոնկրետ բներում որոշ բառիմաստների իրացման ներուժը և չիրացման հնարավոր պատճառները,
- 4) կազմել յուրաքանչյուր ենթախմբի բայերի տիպային բառակազմական բունը երեք լեզուներում առանձին՝ ուսումնասիրելով ներքին օրինաչափություններն ու դրանցից շեղումները,
- 5) համադրել մեկ լեզվի ցավանիշ բայերի բառիմաստային խմբի ենթախմբերի տիպային բառակազմական բները, վեր հանել ընդհանրություններն ու տարբերությունները, կազմել սովյալ լեզվի բառիմաստային խմբի բայերի ընդհանուր տիպային բառակազմական բունը,

⁵ Տե՛ս Սուլտանովա, 2004, Բազովա 2003, Բաղայան 2008 և այլն:

- 6) համեմատել երեք լեզուներում նշված բառիմաստային խումբը կազմող բայերի տիպային բառակազմական բները, ընդ որում՝ դա կատարել և ընդհանուր բառիմաստային խմբի, և ենթախմբերի մակարդակով, գտնել ընդհանրություններն ու տարբերությունները,
- 7) բացահայտել գուգադրվող լեզուների տիպային բառակազմական բներում առկա «դատարկ վանդակներն» ու դրանց առաջացման պատճառները, ինչպես նաև պարզել դրանց փոխհատուցման միջոցները,
- 8) բառակազմական կադապարման մեթոդի միջոցով կատարել ցավի լեզվական կարգայնացում՝ ըստ բառակազմական հիմնատիպի հետ նմանության աստիճանի՝ որպես չափանիշ ընդունելով կոնկրետ բներում արտահայտված տիպային բառակազմական իմաստների քանակը,
- 9) վեր հանել ցավ համամարդկային կարգի հիմնատիպային հատկանիշների հավաքակազմը:

Հետազոտության գիտական նորություն այն է, որ ատենախոսության մեջ առաջին անգամ առանձնացվում, բնութագրվում և ուսումնասիրվում է ցավանիշ բայերի բառիմաստային խումբն անգլերենում, հայերենում և ռուսերենում: Առաջին անգամ է կատարվում նաև այս բայերի բառակազմական հնարավորությունների և ներուժի համակողմանի ուսումնասիրություն և գուգադրություն՝ օգտագործելով բառակազմական կադապարման մեթոդը՝ հիմնատիպերի միջոցով: Աշխատանքում առաջին անգամ ներմուծվում և կիրառվում են *բառակազմական ակտիվության գործակցի* գաղափարը և հաշվարկման բանաձևը: *Ցավի* կարգայնացման միջոցով վերհանվում են դրա հիմնատիպային հատկանիշները ինչպես անգլերենում, հայերենում և ռուսերենում՝ առանձին-առանձին, այնպես էլ երեք լեզուներում՝ դուրս բերելով ճանաչողական ընդհանրությունները:

Հետազոտությունը տեսական արժեք է ներկայացնում թե՛ մասնավոր, թե՛ ընդհանուր և թե՛ տիպաբանական լեզվաբանության ոլորտների համար, քանի որ այն կարող է նպաստել անգլերենի, հայերենի և ռուսերենի բառակազմական համակարգերի ինչպես ներլեզվական, այնպես էլ տիպաբանական-գուգադրական ուսումնասիրություններին: Բացի այդ՝ սույն հետազոտության եզրակացությունները կարող են օգտակար լինել ճանաչողական հայեցակերպի համատեքստում բառակազմական գործընթացների հետագա ուսումնասիրությունների կատարման համար:

Հետազոտությունն ունի նաև որոշակի **գործնական արժեք**, քանի որ դրա արդյունքները կարող են օգտագործվել 1) ճանաչողական լեզվաբանության, մասնավորապես՝ ճանաչողական բառակազմության դասընթացներում, 2) անգլերենի, հայերենի և ռուսերենի գուգադրական-տիպաբանական դասընթացներում, 3) ինչպես նաև նշված լեզուների բառագիտությանը և բառակազմությանը նվիրված առանձին հատուկ դասընթացներում: Հետազոտությունը կարող է օգտակար լինել նաև գործնական ձեռնարկների, մեկ-, երկ- և եռալեզվյան բառակազմական բառարանների ստեղծման հարցում:

Հետազոտության մեջ կիրառվել են *բառարանային համատարած ընտրանքի, բառիմաստի բաղադրիչային վերլուծության, զուդադրական-տիպաբանական, բառակազմական կաղապարման, հիմնատիպային կարգայնացման, վիճակագրական և զուգորդումների փորձարկման մեթոդները*: Կատարվել է նաև լեզվաբանական կորպուսների տվյալների ուսումնասիրություն և վիճակագրական վերլուծություն:

Հետազոտության առանձին դրույթները և արդյունքները **քննարկվել և փորձարկվել** են Երևանի Վ.Բոյունովի անվան պետական լեզվաբանական համալսարանի լեզվաբանության և հաղորդակցման տեսության ամբիոնի նիստերում, միջբուհական և միջազգային գիտաժողովներում և տպագրվել են գիտական պարբերականներում և ժողովածուներում:

Ատենախոսությանն առաջադրված նպատակներով ու խնդիրներով է պայմանավորված դրա **կառուցվածքը**: Այն բաղկացած է *ներածությունից, չորս գլուխներից, եզրակացությունից, գրականության ցանկից, համառոտագրությունների ցանկից և 7 հավելվածից*:

Ներածական մասում հիմնավորվում են թեմայի ընտրությունը, արդիականությունը, հետազոտության նպատակներն ու խնդիրները:

Առաջին գլուխը, որը վերնագրված է «**Ցավանիշ բայերի բառիմաստային խումբը անգլերենում, հայերենում և ռուսերենում (իմաստաբանական հայեցակերպ)**», բաղկացած է երկու ենթագլուխներից:

Այս գլխում ամփոփվում են անգլերենի, հայերենի և ռուսերենի ցավանիշ արմատական բայերի իմաստաբանական դասակարգմանն ուղղված հետազոտությունների հիմնական արդյունքները, որոնք որոշակիորեն ազդում են այդ բայերի բառակազմական հնարավորությունների վրա:

Առաջին ենթագլխում ներկայացվում են բայերի իմաստաբանական դասակարգման հիմնական մոտեցումները՝ դրանք դիտարկելով ճանաչողական լեզվաբանության հիմնական խնդիրներից մեկի՝ լեզվական կարգայնացման համատեքստում՝ որպես մարդու մտածական գործընթացի արդյունք:

Բայերը հատուկ հետաքրքրություն են ներկայացնում ճանաչողական ուսումնասիրությունների համար, քանի որ ինչպես նշում է Վ. Կոլեսովը, բայը ամենահին խոսքի մասն է, որը մինչ օրս շատ առումներով պահպանել է իր հնագույն իմաստները⁶: Բայի գործածումը կոնկրետ իրադարձության կարգայնացման համար նշանակում է նրա (բայի) վերագրումը մի որոշակի կարգի, որի շրջանակներում իմաստավորվում է ուսումնասիրվող միավորը: Դա իր հերթին ենթադրում է հենց բայի կարգայնացում լեզվում՝ որպես դրա վերագրում որոշակի բառային և բառաքերականական դասերի, որոնք միավոր-

⁶ Колесов В., Мир человека в слове Древней Руси / В. В. Колесов. - Л., 1986. - 312 с.:12-13:

ված են ընդհանուր նշանագիտական գործառնությունով: Արդյունքում իրադարձության կարգայնացումն արտացոլվում է բայի կարգային նշանակության մեջ⁷:

Բայերի իմաստային դասակարգումը բավականաչափ ուսումնասիրված, սակայն մինևս միայնակ ժամանակ վիճահարույց է, որն արտացոլվում է այն տարբեր մոտեցումներում, որոնք կան բայերի իմաստային դաշտերի և բառիմաստային խմբերի սահմանագատման խնդիրների լուծման մեջ:

Բայերի իմաստային դասակարգման հարցերով զբաղվել են այնպիսի ականավոր գիտնականներ, ինչպիսիք են, օրինակ, Յ. Տրիբը, Լ. Շչերբան, Վ.Վինոգրադովը, Ու. Չեյֆը, Յու. Մասլովը, Ջ. Վենդլերը, Ե.Պադուչևան, Յու. Ապրեսյանը, Օ. Սելվերստովան, Լ.Վասիլեվը, Տ. Բուլիգինը, Մ. Աբեդյանը, Մ. Ասատրյանը, Ա. Աբրահամյանը, Հ. Բարսեղյանը, Է. Աղայանը, Գ. Ջահուկյանը, Հ. Աճառյանը, Ա. Մուրվալյանը, Մ. Գալստյանը, Հ. Պետրոսյանը, Մ. Էլոյանը և այլք:

Ժամանակակից լեզվաբանության մեջ գոյություն ունի բայական բառապաշարի երկու հիմնական դասակարգում՝ ակցիոնալ և թեմատիկ⁸: Ճանաչողական լեզվաբանության համատեքստում հատկապես կարևորվում է բայերի **ակցիոնալ** դասակարգման համեմատաբար նոր մեթոդը՝ հիմնված դիաթեզի հասկացության վրա, որը լեզվաբանության մեջ ներմուծվել է Բ.Լևինի կողմից⁹: **Դիաթեզ է** անվանվում ստորոգյալի շարահյուսական կարգը, որն արտացոլում է որոշակի համապատասխանություն ստորոգյալով նշանակված իրադրության մասնակիցների (իմաստային ակտանտների՝ theta-role structure) և նախադասության անվանական անդամների միջև, որոնք լրացնում են տվյալ ստորոգյալի արժույթականությունը (շարահյուսական կամ փաստարկային (արգումենտային) ակտանտներ՝ syntactic argument structure)¹⁰:

Բայերի **իմաստային-թեմատիկ** դասերը ձևավորում են բայերի մի քանի տասնյակ այնպիսի խմբեր, ինչպիսիք են, օրինակ, վիճակը, շարժումը, ֆիզիկական ազդեցությունը, արարումը, գոյությունը, խոսելը, ընկալումը, իմացությունը, զգայությունները, ցավը և այլն: Անդրադառնալով ցավանիշ բայերի բառիմաստային խմբի իմաստային դասակարգման խնդրին՝ պետք է նշել, որ լեզվաբանների կողմից այն առաջադրվել է միայն վերջերս: Ցավանիշ բայերի դասակարգման փորձեր են կատարվել Ռ. Մելգաքի, Ք. Լասկարտուի, ինչպես նաև Ա. Բոնչ-Օսմոլովսկայայի, Ե. Ռախիլինայի և Տ. Ռեզնիկովայի կողմից: Ընդ որում, այս դասակարգումները, որոնք որոշ չափով օգտագործված են մեր հետազոտության մեջ, այնուամենայնիվ ամբողջական լուծում չեն տալիս ցավանիշ բայերի կարգայնացման խնդրին:

⁷ Болдырев Н., Функциональная категоризация глагола и динамика глагольного значения // Языковая категоризация (части речи, словообразование, теория номинации). - М.: Институт языкознания РАН Тамбовский ГУ, 1997. - сс. 48-51.: 48-51:

⁸ Տե՛ս նույն տեղում:

⁹ Levin B. , Rappaport Hovav M., Argument realization. - Cambridge: Cambridge University press, UK, 2005.- viii+278 p.: 45:

¹⁰ Տե՛ս նույն տեղում:

Առաջին գլխի **երկրորդ ենթագլխում** ներկայացված են անզերենի, հայերենի և ռուսերենի ցավանիշ բայերի իմաստաբանական դասակարգման արդյունքները, որը կատարվել է մի քանի մոտեցմամբ:

Առաջին մոտեցմամբ բոլոր ցավանիշ բայերը բաժանվել են երկու հիմնական ցավի **արտահայտման** (հմմտ.՝ *անզլ. cry, moan*, հայ.՝ *լալ, տնքալ*, ռուս.՝ *плакаты, стонаты* և այլն) և ցավի **նկարագրման** (հմմտ.՝ *անզլ. hurt, suffer*, հայ.՝ *մզալ, մորմոքել*, ռուս.՝ *мозжить, страдаты* և այլն) բայերի ենթախմբերի:

Ցավի **արտահայտման** բայերը որոշ չափով հարում են «*ասացական*» բայերի բառիմաստային խմբի ծայրամասային գոտուն, իսկ ցավի **նկարագրման** բայերը ներկայացնում են «*վիճակ*» ընդհանուր իմաստ արտահայտող բառիմաստային խումբը՝ ձևավորելով վերջինիս «*ֆիզիկական*», «*ֆիզիոլոգիական*» և «*հոգեկան*» ենթախմբերը, այսինքն ցույց են տալիս գործընթացներ, որոնք կատարվում են կենդանի օրգանիզմներում¹¹: Հատկանշական է, որ վերոնշյալ բառիմաստային առանձնահատկություններն արտացոլվում են նաև բայերի բառակազմական հնարավորություններում, որն էլ հիմք է հանդիսացել մեր հետազոտության մեջ բառակազմական բների ուսումնասիրությունը վերոնշյալ ենթախմբերում առանձին-առանձին կատարելու համար:

Երկրորդ մոտեցմամբ փորձ է արվել ցավի նկարագրման բայերը տեղայնացնել երեք ենթախմբերում, մասնավորապես՝ ֆիզիկական (հմմտ.՝ *անզլ. crack, smother*, հայ.՝ *ուռչել, թանչել*, ռուս.՝ *збнуть, ломить*), ֆիզիկական և հոգեկան (անզլ.՝ *ail, hurt*, հայ.՝ *մորմոքել, տառապել*, ռուս.՝ *страдаты, терпеты*) և հոգեկան ցավի նկարագրման բայեր (անզլ.՝ *languish, regret*, հայ.՝ *տվայտել, զղջալ*, ռուս.՝ *каяться, тужить*):

Այնուհետև ցավի նկարագրման բայերի յուրաքանչյուր ենթախմբում բայերը դասակարգվել են՝ ըստ ցավի և որևէ լրացուցիչ իմակի առկայության/բացակայության, որը, սակայն, հաջողվել է միայն ֆիզիկական ցավի նկարագրման բայերի դեպքում: Ըստ այդ չափանիշի՝ վերոնշյալ բայերը տեղայնացվել են հետևյալ մասնավոր ենթախմբերում. **ա**) գուտ ֆիզիկական ցավ (անզլ.՝ *labour, tingle*, հայ.՝ *նվալ, մրմռալ*, ռուս.՝ *мозжить, ныть*), **բ**) ֆիզիկական ցավ + ջերմաստիճանի փոփոխություն (անզլ.՝ *burn, freeze*, հայ.՝ *մրսել, տժալ*, ռուս.՝ *гореть, мерзнуть*), **գ**) ֆիզիկական ցավ + շարժում (անզլ.՝ *flinch, wince*, հայ.՝ *դողալ, թարտալ*, ռուս.՝ *дрожать, корчиться*), **դ**) ֆիզիկական ցավ + ձայնի արձակում (անզլ.՝ *belch, cough*, հայ.՝ *հնալ, հազալ*, ռուս.՝ *перхаты, рыгаты*), **ե**) ֆիզիկական ցավ + ամբողջականության խախտում/ գործառության կորուստ (անզլ.՝ *crack, swell*, հայ.՝ *քրնել, ճաքել*, ռուս.՝ *ломить, пухнуть*), **զ**) ֆիզիկական ցավ + տհաճ զգացողություն / գործողություն (անզլ.՝ *disgorge, vomit*, հայ.՝ *ործկալ, փսիսել*, ռուս.՝ *рвать*):

Չորրորդ մոտեցմամբ ուսումնասիրվող բայերը դասակարգվել են ըստ նրանցում առկա ցավանիշ իմաստների քանակի և տեղի: Առաջին հերթին

¹¹ Дурова Е., Выражение процессуального состояния субъекта: на материале русского и испанского языков : диссерт.... канд. филол. наук, - Воронеж, 2012. - 184 с. : 7:

առանձնացվել են մենիմաստ (անգլ.՝ *ail, yell*, հայ.՝ *մզայ, զկռտայ*, ռուս.՝ *визжать, мозжеть*) և բազմիմաստ (անգլ.՝ *ache, heave*, հայ.՝ *բղավել, լայ*, ռուս.՝ *гореть, ныть*) բայերը:

Բազմիմաստ բայերն իրենց հերթին տրոհվել են հետևյալ դասերի՝

- **միայն մեկ իմաստով ցավանիշ** բայեր, որոնք կարող են ցավանիշ լինել ա) առաջին իմաստով (անգլ.՝ *complain, scream*, հայ.՝ *ծղրտայ, դողայ*, ռուս.՝ *корчуть, ныть*), բ) ոչ առաջին իմաստով (անգլ.՝ *crack, sting*, հայ.՝ *ճաքել, դժժալ*, ռուս.՝ *гудеть, ломить*),
- **երկու կամ ավելի իմաստներով ցավանիշ**, որոնց ցավանիշությունն արտահայտված է ա) առաջին իմաստի առկայությամբ (անգլ.՝ *cry, hurt*, հայ.՝ *բքնել, հազալ*, ռուս.՝ *збнуть, ныть*), բ) առաջին իմաստի բացակայությամբ (անգլ.՝ *burn, freeze*, հայ.՝ *մրսել, սառել*, ռուս.՝ *гореть, мерзнуть*):

Նշենք նաև, որ առաջին իմաստով ցավանիշ բայերն առանձնանում են ոճային նշութավորվածության բացակայությամբ և ուղղակի ցավանիշ իմաստի առկայությամբ:

Հմնտ.՝ **scream- 1.** to utter a long loud piercing cry, as from pain or fear, **կսկծալ**, չբ. 1. ցավ տալ, մրմռալ, **стонать-1.** издавать стон (стоны). *Стонать от боли.*

Ի տարբերություն անգլերենի՝ ոչ առաջին իմաստով/իմաստներով ցավանիշությունը ռուսերենում զուգակցվում է ոճական նշութավորվածության, իսկ հայերենում՝ փոխաբերական իմաստի առկայության հետ: Հմնտ. **bleat - 2.** to talk complainingly or with a whine, **մխալ- 4.** *փխբ*: տանջվել, տառապել, **гудеть - 3.** *прот.* непрерывно, сильно ныть (об ощущении боли, усталости):

Ատենախոսության **երկրորդ** գլուխը վերնագրված է «**Ցավի արտահայտման բայերի բառակազմական հնարավորությունները անգլերենում, հայերենում և ռուսերենում**»: Այն բաղկացած է հինգ ենթագլուխներից:

Առաջին ենթագլխում ներկայացվում են ճանաչողական հայեցակերպի դրսևորումները ժամանակակից բառակազմական ուսումնասիրություններում:

Վերլուծելով Ե. Ջենսկայայի, Ռ. Մանուչարյանի, Ի. Ուլուխանովի, Բ. Ալտմանի, Ե. Գինգբուրգի, Ի. Միլոսլավսկու, Ա. Տիխոնովի, Գ. Ջենկովի, Մ. Յանցենցկայայի, Ա. Լիկովայի, Ն. Շանսկու, Ի. Շիրշովի, Կ. Աբրահամյանի բառակազմությանը և, մասնավորապես, բառակազմական բների ուսումնասիրությանը նվիրված բազմաթիվ աշխատություններ, ինչպես նաև առաջնորդվելով ճանաչողական լեզվաբանության կարկառուն ներկայացուցիչներից մեկի՝ Ե. Կուբրյակովայի՝ բառակազմական համակարգի ուսումնասիրության հիմնական սկզբունքներով¹², որպես հետազոտության գլխավոր ուղղություններ են դիտարկվում կարևոր ճանաչողական արժեք ներկայացնող բառակազմության համալիր միավորների՝ բառակազմական կարգերի (ԲԿ), հարացույցների(ԲՀ) և բների(ԲԲ) ուսումնասիրությունը:

¹² Кубрякова Е., Ключевые проблемы когнитивного словообразования // Abstracts. Cognitive Linguistics East of Eden. Turku, Finland, 2002. –с. 12:

Ընդ որում, որպես ուսումնասիրության ելակետ է ընդունվում ԲԲ-ը, որպես բառակազմության համալիր միավորներից¹³ ամենաբաղադրյալ ու ամենավերացարկված, խստիվ ստորակարգված մի միասնություն, որը ցուցադրում է մի շարք առանձնահատուկ հատկանիշներ, որոնք բնորոշ են և դրսևորվում են նույնարմատ բառերի միայն բնային կազմակերպման ժամանակ: Այդպիսի հատկանիշներից են՝ 1) բառակազմական տարբերակների (օր.՝ **weeping² adj /weepy¹ adj**), 2) **«դասարկ վանդակներ»** առկայությունը, որոնց դեպքում գործում են լեզվի օտարման և փոխհատուցման գործընթացները, 3) ձևի և բովանդակության անհամաչափության խնդիրը, 4) ԲԲ-ների **խորությունը** և **ծավալը**¹⁴:

ԲԲ-ների ուսումնասիրության ժամանակ կարևորվում է նաև անդրադարձը բառակազմության մյուս համալիր միավորներին և, հատկապես, **բառակազմական հարացույցին**, որը բառակազմության մեջ հարացուցային հարաբերությունների գոյության ձևերից մեկն է:

ԲՀ-ների բազմաթիվ վիճելի սահմանումներից առավել ընդունված է հետևյալը. **«բառակազմական հարացույցը միննույն սերող հիմք ունեցող և ածանցման միննույն աստիճանին գտնվող ածանցյալների միասնություն է»**¹⁵:

ԲՀ-ից տարբերվում է **տիպային կամ իմաստաբառակազմական հարացույցը** (ԻԲՀ), որը ըստ Ռ. Մանուչարյանի, մի համալիր է բառակազմական իմաստների, որոնք արտահայտվում են մի որոշ դասի բառերի հիման վրա¹⁶: Այս միավորի մեջ կոնկրետ բառակազմական հարացույցներն ընդհանրացվում են համաձայն իրենց սերող հիմքերի իմաստների ընդհանրության: Արդյունքում կարելի է ասել, որ ԻԲՀ-ն բառակազմական կարգերի համալիր է: Կառուցվածքի տեսանկյունից այն կարելի է դիտարկել նաև որպես որոշ դասի պատկանող բառերի կոնկրետ հարացույցների ընդհանրացում:

Այսպիսով, ԻԲՀ-ն ստորակարգության ավելի բարձր միավոր է, քան կոնկրետ ԲՀ-ը, և դրանով իսկ՝ ավելի վերացական է և արդեն իսկ տիպային: Եվ քանի որ այն ներառում և ընդհանրացնում է բառակազմական կարգերը, ապա կարելի է ասել, որ ԻԲՀ-ն երկպլանային միավոր է, այսինքն՝ ունի ինչպես բովանդակության, այնպես էլ արտահայտության պլան: ԻԲՀ-ի անդամ են այն բառակազմական կարգերը, որոնք ընդհանուր են առնվազն երկու կոնկրետ

¹³ Բառակազմության համալիր միավորներն են բառակազմական գույգը, բառակազմական տիպը, բառակազմական կարգը, բառակազմական շղթան, բառակազմական հարացույցը և բառակազմական բունը (այս մասին ավելի մանրամասն տե՛ս Современный русский язык. Под ред. В. Белошапковой. - 2-е изд., -М.: Высшая школа, 1989, - 800с. :332-345):

¹⁴ ԲԲ-ի խորությունը չափվում է նրանում ընդգրկված բառակազմական քայլերի (աստիճանների) քանակով, իսկ ծավալ ասելով հասկանում են նրանում ներառված բոլոր ածանցյալների քանակը (տե՛ս Соболева, П.А. Словообразовательная полисемия и омонимия. - М.: Наука, 1980. - 294с. : 165-212]:

¹⁵Земская Е., О парадигматических отношениях в словообразовании //Русский язык . Вопросы его истории и современного состояния. - М., 1987. сс.70-77: 71:

¹⁶ Манучарян Р., Словообразовательно-семантическая парадигма. - В кн.: Сборник научных трудов МГПИ иностранных языков им. М.Тореза - № 164, - М., 1980, -сс. 54-59:

բառակազմական հարացույցների համար, իսկ դրանցով արտահայտված ԲԻ-ները կոչվում են **տիպային**¹⁷:

Վերոնշյալ բոլոր միավորների յուրահատուկ ընդհանրացումն ու տրամաբանական ավարտն է **տիպային բառակազմական բունը** (ՏԲԲ), որը Կ. Աբրահամյանը բնորոշում է հետևյալ կերպ՝ «ՏԲԲ-ը, որպես ստորակարգություն ամենավերացարկված համալիր միավոր, որոշ բառերի միկրոհամակարգի բառակազմական ակտիվության և ներուժի գծապատկերային արտացոլումն է, այսինքն՝ որոշակի հիմնատիպային կմախք, և եթե բնի ելակետային բառը, այսինքն՝ սերող հիմքը, դիտարկվում է որպես յուրահատուկ մի գենետիկ կոդ, որում ներդրված է մի շարք հատկանիշների ներուժը, որոնք հետագայում իրականանում են կոնկրետ ածանցյալներում, ապա տիպային բունը կարելի է դիտարկել որպես ոչ թե մեկ բառի, այլ ամբողջ մի բառիմաստային խմբի բառասերման “գենոֆոնդ”»¹⁸:

Տիպային բունը կազմող ԲԻ-ները ոչ միայն պարզապես տիպային, այլև արդեն հիմնատիպային են ուսումնասիրվող բառային խմբի բոլոր սերող հիմքերի համար:

Տիպային բառակազմական բունը կարող է բաղկացած լինել բառակազմական I, II, III և այլ քայլերի ԻԲՀ-ներից, որոնք իրենց հերթին ներառում են տարբեր բառակազմական կարգեր:

Այս երեք համալիր միավորները (ՏԲԲ, ԻԲՀ և ԲԿ) կարելի է դիտարկել որպես երեք մակարդակների բառակազմական հիմնատիպեր, որոնց օգնությամբ կատարվում է օբյեկտիվ իրականության բառակազմական կաղապարումը և կարգայնացումը:

ԲԲ-ների ուսումնասիրության ժամանակ հարկ է հաշվի առնել նաև դրանց բառ-գազաթների բառակազմական ակտիվությունը, ներուժը, ինչպես նաև բառակազմական հնարավորությունների իրացման վրա ազդող տարատեսակ սահմանափակումները¹⁹:

ԲԲ-ների ուսումնասիրության ժամանակակից փուլում մեծ տեղ է զբաղեցնում այնպիսի ԲԲ-ների վերլուծությունը, որոնց գազաթները միավորվում են մեկ բառիմաստային խմբի մեջ, քանի որ ԲԲ-ների իմաստակառուցվածքային հատկանիշները նշանակալիորեն պայմանավորված են դրանց ելակետային բառերի՝ այս կամ այն իմաստային խմբի պատկանելությամբ:

Երկրորդ գլխի **երկրորդ, երրորդ և չորրորդ ենթազուխներում** առանձին-առանձին ամփոփվում են **անզլերենի, հայերենի և ռուսերենի ցավի արտահայտման բայերի** տիպային բառակազմական բների, իսկ **հինգերորդ**

¹⁷ Абрамян К., Когнитивные отношения в словообразовании (на материале непроизводных глаголов английского языка в сопоставлении с армянским и русским) АДД.-Ереван. 2007.-30с. : 15

¹⁸ Տե՛ս նույն տեղում, էջ 16:

¹⁹ Ընդ որում վերջիններս կարող են լինել ինչպես *արտա* - , այնպես էլ *ներլեզվական* [այդ մասին տե՛ս Գ. Зенков 1963, И. Милославский 1979, Е. Земская 1989, Г. Быкова 1999, D. Kastovsky 2000, V. Jovanović 2003, В. Гриценко 2007 և այլն]:

ենթազլխում՝ երեք լեզուների տվյալ բառիմաստային ենթախմբի բայերի ընդհանրացված ՏԲԲ-ների կառուցվածքային առանձնահատկությունների հետազոտության արդյունքները: Ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ երկլեզու և/կամ եռալեզու ընդհանրությունները դիտվում են բառակազմական 1-ին (7 ԲԻ) և 2-րդ (5 ԲԻ) քայլերի բոլոր գոտիներում: **Գոյականական** գոտում երեք լեզուներում արտահայտված են **գործողության արդյունքի** (հմմտ.՝ անգլ.՝ *cry*², *moan*², հայ.՝ *թառանչ, լալլուն*, ռուս.՝ *вой, рев* և այլն), **գործողության անվանման** (հմմտ.՝ անգլ.՝ *sighing, sobbing*, հայ.՝ *կոծում, մղկտանք*, ռուս.՝ *кричание, скуление* և այլն) և **հատկանիշի անվանման** (հմմտ.՝ անգլ.՝ *lamentableness, whininess*, հայ.՝ *լալկանություն, ճղճղանություն*, ռուս.՝ *крикливость, плачевность* և այլն) ԲԻ-ները: Ընդ որում՝ երեք լեզուներից անգլերենն առանձնանում է նրանով, որ ցավի արտահայտման բայերի ԻԲՀ 1-ում ածանցված գոյականների մի մասն արտահայտում է միայն գործողության արդյունքի ԲԻ, իսկ մյուս մասը՝ երկու ԲԻ-ը միաժամանակ: Հայերենում և ռուսերենում ածանցվում են՝ 1) գոյականներ, որոնք արտահայտում են միայն գործողության արդյունքի կամ անվանման ԲԻ-ներն առանձին-առանձին, և 2) գոյականներ, որոնք արտահայտում են երկու ԲԻ-ը միաժամանակ՝ ցուցաբերելով բազմիմաստություն:

«**Գործողություն կատարող**» ԲԻ-ն արտահայտված է միայն անգլերենում և ռուսերենում: Հայերենում իմաստային «դատարկ վանդակները» լրացվում են ածականների և ենթակայական դերբայի գոյականական կիրառությամբ: Ընդ որում՝ եթե բառիմաստային այլ խմբերի մեջ գոյություն ունեն բառեր, որոնց երկար գործածության շնորհիվ տեղի է ունեցել գործողություն կատարողի իմաստն արտահայտող ենթակայական դերբայների գոյականացման գործընթաց (ինչպես օր.՝ ուսանող, սովորող և այլն), ապա ածանցյալ ցավանիշ գոյականների դեպքում նման օրինակներ չեն դիտարկվում:

Ածականական գոտում երեք լեզուներում համընկնում են «**գործողությունը կատարելու ունակության հատկանիշ**» ԲԻ-ը (ԻԲՀ 1), որի միջոցով իրացվում է «**գործողության սուբյեկտ**» իմակը (հմմտ.՝ անգլ.՝ *ululant, weepy*, հայ.՝ *լալկան, տրտնջկոտ*, ռուս.՝ *визгливый, сетующий* և այլն): Անգլերենի համար տիպային «**գործողությանը ենթարկվելու հատկանիշ**» (օր.՝ *lamentable, complainable*) ԲԻ-ը, որի դեպքում իրացվում է «**գործողության օբյեկտ**» իմակը, հայերենի և ռուսերենի ուսումնասիրվող բայերի տվյալ խմբի ԲԲ-ներում բացակայում է՝ հիմնականում պայմանավորված բայերի անանցողականությամբ²⁰: Այս գոտում անգլերենում և հայերենում տիպային է նաև «**ինչ-որ բանի վերաբերելու, ինչ-որ բան պարունակելու, ներկայացնելու, ինչ-որ բանով բնութագրվելու հատկանիշ**» ԲԻ-ը (հմմտ.՝ անգլ.՝ *sobful, wailful*, հայ.՝ *անկոծ, անտրտունջ* և այլն) (ԻԲՀ 2): **Սակբայական** գոտում եռալեզու ընդհանրություններ չեն դիտարկվում,

²⁰ Անգլերենում, ի տարբերություն հայերենի և ռուսերենի, անանցողական բայերի մի մասն ունի նաև անցողական (օբյեկտային) գործածություն, որի շնորհիվ էլ իրացվում է «**գործողության օբյեկտ**» իմակը:

հայերենում և ռուսերենում համընկնում են «գործողության հատկանիշ» (հմմտ.՝ հայ. լալագին, հեծագին, ռուս. кричмя, ревмя) (ԻԲՀ 1), իսկ անգլերենում և ռուսերենում՝ «գործողությունը կատարելու ունակության հատկանիշի հատկանիշ» (հմմտ. անգլ. moaningly, yammeringly, ռուս. рыдающе, стонуще և այլն) (ԻԲՀ 2) ԲԻ-ները: Հետաքրքրական է, որ մակբայների ածանցմամբ առավելապես աչքի է ընկնում անգլերենը, իսկ հայերենում և ռուսերենում սերված մակբայները շատ փոքր թիվ են կազմում: Բայական գոտում համընկնումներ են դիտվում միայն ԻԲՀ 1-ում, ընդ որում երեք լեզուների համար տիպային է «ուժգին/ ավելի ուժգին կատարել որևէ գործողություն» (հմմտ.՝ անգլ. overmourn, outshriek, հայ. ճղավել, նվվալ, ռուս. взвыть, возрыдать և այլն), իսկ հայերենի և ռուսերենի համար նաև՝ «բազմակի (և տևական) կատարել որևէ գործողություն» (հմմտ.՝ հայ. կոծկոծել, նվնվալ, ռուս. разреветься, расстонаться և այլն) ԲԻ-ը: Հետաքրքրական է, որ ի տարբերություն ռուսերենի, որտեղ գործողության բազմակի կատարման իմաստը կարող է զուգակցված լինել ուժգնության հետ, հայերենում գործողության կատարման այդ երկու եղանակներն արտահայտված են առանձին ԲԻ-ներով: Ինչ վերաբերում է անգլերենին, ապա այս լեզվում գործողության բազմակի և տևական կատարումն արտահայտվում է բառային, քերականական և շարահյուսական միջոցներով (ինչպես օրինակ, համապատասխան մակբայների, շարունակական կերպի, used to+ infinitive, would + infinitive կառույցների և այլն):

Ատենախոսության երրորդ գլուխը վերնագրված է «Ցավի նկարագրման բայերի բառակազմական ակտիվությունն ու ներուժը ժամանակակից անգլերենում, հայերենում և ռուսերենում»: Սույն գլխի առաջին երեք ենթագլուխներում առանձին-առանձին ամփոփվում են ցավի նկարագրման բայերի ՏԲԲ-ների կառուցվածքի վերլուծության արդյունքները երեք լեզուներում, իսկ չորրորդ՝ վերջին ենթագլխում ներկայացվում է ցավանիշ բայերի նշյալ ենթախմբի բայերի երեք լեզուների ընդհանրացված ՏԲԲ-ը:

Երեք լեզուների ցավի նկարագրման բայերի ՏԲԲ-ների զուգադրումը ցույց է տալիս, որ երկլեզու և/կամ եռալեզու ընդհանրություններ են դիտարկվում կրկին բոլոր գոտիներում, ընդ որում բառակազմության 1-ին (8 ԲԲ), 2-րդ (9 ԲԲ), 3-րդ (2 ԲԲ) և 4-րդ (1 ԲԲ) աստիճաններում: Գոյականական գոտում երեք լեզուներում ընդհանուր են գործողության անվանման և արդյունքի (հմմտ. անգլ. burning, panting, հայ. կսկծանք, մորմորանք, ռուս. горение, страдание և այլն) (ԻԲՀ 1 և 2), ինչպես նաև «հատկանիշի անվանում» (հմմտ. անգլ. hurtfulness, unrepentance, հայ. նվաղկոտություն, ուռուցվորություն, ռուս. опухлость, нераскаянность և այլն) (ԻԲՀ 3) ԲԻ-ները: Անգլերենի և ռուսերենի համար տիպային «գործողություն կատարող» (հմմտ. անգլ. sufferer, panter, ռուս. перхун, страдалец և այլն) և «հատկանիշ կրող (չնչավոր կամ անշունչ)» (հմմտ. անգլ. vomitory, repentant, ռուս. потерпевший, пострадавший, և այլն) ԲԻ-ները հայերենում բացակայում են, իսկ իմաստային բացերը լրացվում են համապատասխանաբար հարակատար դերբայի և ածականների գոյականական կիրառությամբ (հմմտ.՝ հազուգոդ, տատապյալ և այլն): Ածականական գոտում համընկնում են 5 ԲԻ-ներ, որոնցից 4-

ը՝ «գործողությունը կատարելու ունակության հատկանիշ» (հմմտ.՝ անգլ. *suffocative, hurting*, հայ. *դողուն, գղջավոր*, ռուս. *ноющий, страдающий* և այլն), «գործողությանը ենթարկվելու հատկանիշ» (հմմտ.՝ անգլ. *chokable, sufferable*, հայ. *գղջալի, ապաշափ*, ռուս. *дрожательный, терпимый* և այլն), «գործողությանը ենթարկված լինելու, դրա արդյունք լինելու հատկանիշ» (հմմտ.՝ անգլ. *burnt, swollen*, հայ. *հնահար, տառապյալ*, ռուս. *мерзлый, потерпевший* և այլն), «ինչ-որ բանի վերաբերելու, ինչ-որ բան պարունակելու, ներկայացնելու, ինչ-որ բանով բնութագրվելու հատկանիշ» (հմմտ.՝ անգլ. *griepful, regretful*, հայ. *ապաշխարական, ուռուց(ա)վոր*, ռուս. *перхотный, рвотный* և այլն) երեք լեզուներում, այսինքն դրանք բառակազմական ընդհանրություններ են: Անգլերենի և հայերենի համար տիպային «գործողությանը ենթարկվելու հատկանիշի բացակայություն, ժխտում» (հմմտ.՝ անգլ. *unchokable, unendurable*, հայ. *անգղջալի, անապաշափ*) ԲԻ-ը (ԻԲՀ 2) ռուսերենում արտահայտված չէ, քանի որ սերված ածականները ցավանիշ իմաստ չեն արտահայտում: Մակբայական և քայական գոտիներում եռալեզու համապատասխանություններ չեն դիտվում: Հայերենում և ռուսերենում ընդհանուր են «գործողության հատկանիշ» (հմմտ.՝ հայ. *հնազին, տառապազին*, ռուս. *дрожмя, гормя*), «բազմակի (և տեսական) կատարել որևէ գործողություն» (հմմտ.՝ հայ. *դողողողալ, հնհնալ*, ռուս. *поломить, натужитьсь* և այլն) (ԻԲՀ 1), «կրել որևէ գործողություն» (հմմտ.՝ հայ. *դողահարվել, կսկծահարվել*, ռուս. *скорчиться, отрыгнуться* և այլն) (ԻԲՀ 3) Բի-ները, իսկ անգլերենի և ռուսերենի համար տիպային է միայն «գործողությունը կատարելու ունակության հատկանիշի հատկանիշ» (հմմտ.՝ անգլ. *tinglingly, languishingly*, ռուս. *ноюще, ломяще* և այլն) ԲԻ-ը (ԻԲՀ 2):

Ատենախոսության չորրորդ գլուխը, որ վերնագրված է «Ցավանիշ բայերի իմաստաբառակազմական վերլուծություն հիմնատիպերի տեսության համատեքստում» բաղկացած է երեք ենթագլուխներից:

Առաջին ենթագլխում ներկայացվում են Է. Ռոշի՝ հիմնատիպերի տեսության հիմնական դրույթները, որոնք, ինչպես և լեզվական կարգայնացման մյուս տեսությունները, միտված են բացահայտելու լեզվի գործունեության մեխանիզմները՝ մտածողության և իրականության հետ անքակտելի կապի մեջ:

Ըստ Է. Ռոշի սահմանման՝ իմաստային *հիմնատիպ* է համարվում կարգի այնպիսի անդամը, որն ունի տվյալ կարգի մնացած անդամների հետ առավելագույն, իսկ այլ կարգերի անդամների հետ՝ նվազագույն ընդհանուր հատկանիշներ: Այս կամ այն առարկայի/հասկացության պատկանելությունը որոշակի կարգի որոշվում է՝ վերջինս համեմատելով տվյալ կարգի հիմնատիպի հետ: Հիմնատիպերը (*prototypes*) կամ ճանաչողական *ռեֆերենցիայի կետերը* (*cognitive reference points*) կարգի այնպիսի անդամներ են, որոնք ունեն հատուկ ճանաչողական կարգավիճակ՝ այն է՝ «*լինել կարգի լավագույն օրինակ*» (GOE - Goodness - of - Exemplar Rating)²¹: Է. Ռոշի կողմից հիմնատիպերը տեղայնացվում են մի սանդղակում, որի յոթ աստիճանները ձևավորում են երեք մակարդակ.

²¹ Rosch E., Cognitive reference points // CP, v.7. 1975a, -pp. 532- 547:

1) **գերագույն** մակարդակ (անգլ.՝ *superordinate level*), որը ներառում է I (ամենալավ ներկայացուցիչ), II (լավ ներկայացուցիչ) և III (բավականին լավ ներկայացուցիչ) աստիճանները, որոնցում տեղակայված են կարգի ամենակենտրոնական բառերը,

2) **միջին կամ հիմնական** մակարդակ (անգլ.՝ *basic level*), որում ներառված են IV (միջին լավ ներկայացուցիչ) և V (բավականին վատ ներկայացուցիչ) աստիճանները,

3) **ստորին** մակարդակ (անգլ.՝ *subordinate level*), որը ներկայացված է VI (վատ ներկայացուցիչ) և VII (ամենավատ ներկայացուցիչ) աստիճաններով, որոնցում գտնվող բառերը կազմում են տվյալ կարգի ծայրամասը և հարում են այլ կարգերի²²:

Չորրորդ գլխի **երկրորդ ենթագլխում** ներկայացվում են անգլերենի, հայերենի և ռուսերենի ցավ հասկացության իմաստաբանական կարգայնացման առաջին փորձի արդյունքները՝ ըստ Է. Ռոշի՝ վարկանշային սանդղավորման և Կ. Յունգի՝ զուգորդումների փորձարկման մեթոդների: Ցավանիշ բայերի զուգորդումների փորձարկումները անցկացվել են Հայաստանում, ԱՄՆ-ում և Ռուսաստանում՝ համապատասխան լեզուների 100-ական ուսանող լեզվակիրների շրջանակներում:

Փորձարկման արդյունքում ստացված զուգորդումները Է. Ռոշի վարկանշային սանդղակի յոթ աստիճանների տեսքով ներկայացնելու արդյունքում պարզ է դառնում, որ **գերագույն մակարդակում** երեք լեզուներում համընկնում են ընդամենը մի քանի բայ²³, մասնավորապես՝ **երեք լեզուներում՝** *cry/ լացել / плакать; suffer / տանջ(վ)ել / страдать; անգլերենում և ռուսերենում* նաև՝ *hurt, ache / болеть; cut / резать(ся); scream / кричать; հայերենում և ռուսերենում* նաև՝ *սխրել/ огорчаться* բայերը: **Միջին կամ հիմնական մակարդակում** համընկնումներն ավելի մեծ թիվ են կազմում, քան նախորդ և հաջորդ մակարդակներում: Մասնավորապես՝ **երեք լեզուներում** համընկնում են՝ *throb / խփել / биться; torment, excruciate, torture, anguish / տառապ(եցն)ել, չարչար(վ)ել, տվախել / мучить(ся). переживать; die / մահանալ / умирать(умереть) և այլն*, միայն **անգլերենում և հայերենում՝** *sore / ցավել; writhe, wince / զալարվել, կծկվել; miss / կարոտել; afflict / վշտանալ*; միայն **անգլերենում և ռուսերենում՝** *injure, wound / (по)ранить(ся); tear / րвать; shoot / стрелять*; և միայն **հայերենում և ռուսերենում՝** *սիր(վ)ել / жечь(сжечь); վիրավոր(վ)ել, նեղացնել / обижать(ся); սիրել / любить; գոռալ / орать; արտասպել/ рыдать ; վախենալ / бояться; դավաճանել / предавать; ատել / ненавидеть; ապրել / жить; զայրանալ / злиться*: Թեև համաձայն Է. Ռոշի տեսության՝ ստորին մակարդակում ընդգրկված

²² Rosch E., Mervis C., Gray W., Johnson D., & Boyes-Braem P., Basic objects in natural categories. *Cognitive Psychology*, 1976. http://homepage.psy.utexas.edu/homepage/group/loveLAB/love/classes/ concepts/ Rosch_etal1976:

²³ Է. Ռոշի տեսության մեջ այս օրինակափոխությունը հիմնավորվում է այն հանգամանքով, որ գերագույն մակարդակում ընդգրկված բայերը կարգի կենտրոնական անդամներն են և ավելի ներլեզվական բնույթ ունեն:

բառերն ամենաճայրամասայինն են և տվյալ կարգի տիպիկ ներկայացուցիչներ չեն, ինչից հետևում է, որ տարբեր լեզուներում, որպես կանոն, անհամապատասխանություններն ու տարբերությունները դրսևորվում են հենց այս աստիճաններում, այնուամենայնիվ մեր հարցումների արդյունքները շեղվում են այդ ընդհանուր օրինաչափությունից, քանի որ ստորին մակարդակում տեղակայված բառերից շատերը համընկնում են կամ երեք լեզուներում, կամ լեզուներից երկուսում: Այս անհամաչափությունն ըստ երևույթին պայմանավորված է լեզվական և արտայեզվական գործոններով. 1) ցավի համամարդկային բնույթով, 2) VI և VII աստիճանների աննախադեպ մեծ ծավալով, որն էլ մեծացնում է համընկնումների հաճախականությունը:

Ուսումնասիրության արդյունքում պարզ է դառնում, որ Ռոշի սանդղակի ստորին մակարդակում **երեք լեզուներում** համընկնում են՝ *press, pinch, crush, clutch, squeeze, compress / ճնշել, սեղմել / сжать, давить; lacerate / բզկտ(վ)ել / раздирать; wail, weep / սգալ / выть stand, tolerate / դիմանալ, տանել, հաղթահարել / переносить, преодолеть; выносить swell / այտուցվել / опухать* բայերը:

Անզլերենում և հայերենում առկա են ևս մի շարք համընկնումներ, մասնավորապես՝ *tingle, punch, pang, pierce, prickle, dag, needle / ծակել, sob / հեկեկալ; numb / անզգայանալ; poke / հրել, scratch / քորել, gasp / հնալ, grimace / ծանաճովել* և այլն: Միայն **անզլերենում և ռուսերենում** դիտարկվող համապատասխանություններն են՝ *suffocate / душить, ignore / игнорировать; labour, give birth / рожать (родить); shudder, tremble, shake / вздрогнуть; remove / удалить; sprain / тянуть; beet / избить* և այլն, իսկ միայն **հայերենում և ռուսերենում**՝ *վիճել / ссориться, մտածել / думать; апоу / раздражать; վազել / бежать, մոռանալ / забыть; խղճալ / жалеть; կռվել / драться; սպասել / ждать* և մի շարք այլ բայեր:

Երրորդ ենթագլխում ներկայացվում են երեք լեզուների ցավանիշ բայերի բառակազմական կարգայնացման փորձի արդյունքները: Հիմնատիպային սանդղակի ձևավորման համար հաշվի են առնվել սերող բայերի բների խորությունը և ածանցյալների քանակը: Որպես կարգայնացման հիմնական չափանիշ է վերցվել տիպային ԲԲ-ների քանակը կոնկրետ բայի ԲԲ-ում, քանի որ բառակազմական միավորների շարքում ԲԲ-ներն առավել հիմնատիպային բնույթ ունեն և ծառայում են աշխարհի հասկացութայնությանն ու կարգայնացմանը: Բառակազմական հիմնատիպի աստիճանակարգը (հիերարխիան), որը ևս կազմված է երեք մակարդակներից, ձևավավորվում է ԲԲ-ների հիման վրա: Ընդ որում ստորին մակարդակը կազմում են բառակազմական կարգերը, միջին կամ հիմնական մակարդակը՝ ԻԲՀ-ները, և գերագույն մակարդակը՝ ՏԲԲ-ը²⁴: Ինչպես ցույց է տալիս հետազոտությունը, **գերագույն մակարդակում երեք լեզուներում** համընկնում են՝ *suffer / տառապել / страдать; shake, tremble / դողալ / дрожать; swell / ուռչել / пухнуть*, միայն **անզլերենում և հայերենում**՝ *regret, repent / գղջալ, pauseate / փսխել* բայերը: Այս մակարդակում ամենաշատ համընկնումներն առկա են **անզլերենում և ռուսերենում**՝ *endure / терпеть; freeze / мерзнуть, зябнуть*;

²⁴ Տե՛ս Աбрамян, նշված աշխատանքը, էջ 14-15:

wail, lament, weep / плакать, рыдать; выть: Միջին (հիմնական) մակարդակում համընկնումների քանակը առավելագույնն է նախորդ և հաջորդ մակարդակների համեմատ: Համապատասխանություններ առկա են **երեք լեզուներում՝** *languish/ ստրջ(ան)ալ; տվյալել, մորմոքել / тужить; yammer, pule, snivel, whinge / վսվսալ, ճոնջալ, թն(ձ/ծ)կալ, տզզալ, զոալ / ныть; хныкать; vomit / ործկալ / рыгать; rue / ապաշաղկել, ապաշխարել / каяться* և այլն, միայն **անգլերենում և հայերենում՝** *blubber, sob / հեկեկալ; կոծել; belch/ բխկալ; tingle, prickle / տժալ, sigh / թանջել; հեծել, roar, shout / գոռալ; pant / հկալ; cry/ լալ, միայն անգլերենում և ռուսերենում՝* *writhe, wince, squirm / корчить;* միայն **հայերենում և ռուսերենում՝** *մզալ, նվալ, մրմոալ / ныть; վնզալ (վնզսալ) / скулить; տ(ն)քալ / стонать: Մտորին մակարդակում* համապատասխանությունները նվազագույն են: Ընդ որում, եռալեզու համապատասխանություն չի դիտարկվում: **Անգլերենում և հայերենում** համընկնում են՝ *mewl / ծմր(ա/ե)լ, թն(կ/զ)ալ, թնթնալ, թոնթոթ(ա/ե)լ; holler, yowl / բոռալ, բղավել, անգլերենում և ռուսերենում՝* *spew, retch / рвать; crack / трескаться; հայերենում և ռուսերենում՝* *մրսել / дрогнуть, մոմալ / мозжить; թառա(ն)չել / пыхтеть* բայերը:

Չուգորդումների փորձարկման և բառակազմական վերլուծության արդյունքում ձևավորված երկու սանդղակները զուգադրելիս պարզ է դառնում, որ դրանք դրսևորում են և՛ նմանություններ, և՛ տարբերություններ: Հատկանշական է, որ զուգադրվող երեք լեզուներում առկա են այնպիսի բայեր, որոնք երկու սանդղակներում էլ գտնվում են միևնույն մակարդակում, և բայեր, որոնք գտնվում են հակադիր մակարդակներում: Ուշագրավ է նաև, որ երկու սանդղակներում առկա համընկնումները համեմատելիս դիտարկվում է դրանց քանակական ցուցանիշների (տոկոսային հարաբերությունների) **աննախադեպ համապատասխանություն:**

Եզրակացության մեջ ամփոփվել են հետազոտության հիմնական արդյունքները:

1. Անգլերենի, հայերենի և ռուսերենի ցավանիշ բայերի բառամաստային խմբում առանձնացվում են ա) ցավի **արտահայտման** և բ) **նկարագրման** բայեր, ընդ որում՝ անգլերենում և ռուսերենում 2-րդ խմբի բայերը քանակական առումով գերազանցում են 1-ին խմբի բայերին: Հայերենում, ընդհակառակը, ցավի արտահայտման բայերը չնչին տարբերությամբ գերազանցում են ցավի նկարագրման բայերը, որն էլ թույլ է տալիս ենթադրելու, որ հայ լեզվամտածողության մեջ, այնուամենայնիվ, առաջնայնությունը տրվում է ցավի արտահայտմանը իր բազմազան դրսևորումներով:

2. Ցավանիշ բայերի ԲԲ-ների ծավալը և կառուցվածքը որոշակիորեն կախված են արմատական բայերի հաճախականությունից և բառամաստների քանակից, այսինքն՝ որքան ճյուղավորված է տվյալ բայի ցավանիշ իմաստների համակարգը, այնքան ավելի ծավալուն է նրա ԲԲ-ը: Բայ-գագաթների առաջին / ոչ առաջին իմաստով ցավանիշության հատկանիշը, սակայն, ԲԲ-ների ծավալի վրա էական ազդեցություն չունի:

3. Երեք լեզուների ցավի արտահայտման բայերի ՏԲԲ-ների զուգադրումը թույլ է տալիս դուրս բերելու լեզվական ընդհանրությունների հիմնական

հավաքակազմը, այն է՝ ածանցյալների արտահայտած ԲԻ-ների եռալեզու համապատասխանությունները, որոնք դիտարկվում են նաև որպես ճանաչողական ընդհանրություններ: Դրանք են՝ «գործողության անվանում», «գործողության արդյունք», «գործողությունը կատարելու ունակության հատկանիշ», «ուժգին / ավելի ուժգին կատարել որևէ գործողություն» (ԻԲՀ 1-ում) և «գործողության անվանում», «հատկանիշի անվանում» (ԻԲՀ 2-ում) ԲԻ-ները:

4. Երեք լեզուների՝ ցավի նկարագրման բայերի ՏԲԲ-ների զուգադրումը ցույց է տալիս, որ բառակազմական, ինչպես նաև ճանաչողական ընդհանրություններ են 10 ԲԻ-ներ՝ «գործողության անվանում», «գործողության արդյունք», «գործողությունը կատարելու ունակության հատկանիշ», «գործողությանը ենթարկվելու հատկանիշ», «գործողությանը ենթարկված լինելու, դրա արդյունք լինելու հատկանիշ» (ԻԲՀ 1-ում), «գործողության անվանում», «գործողությունը կատարելու ունակության հատկանիշ», «գործողությանը ենթարկված լինելու, դրա արդյունք լինելու հատկանիշ», «ինչ-որ բանի վերաբերելու, ինչ-որ բան պարունակելու, ներկայացնելու, ինչ-որ բանով բնութագրվելու հատկանիշ» (ԻԲՀ 2-ում) և «հատկանիշի անվանում» (ԻԲՀ 3-ում):

5. Անզլերենի, հայերենի և ռուսերենի ցավանիշ բայերի ընդհանրացված ՏԲԲ-ում որպես բառակազմական ընդհանրություններ են դիտարկվում «գործողության անվանում», «գործողության արդյունք», «գործողությունը կատարելու ունակության հատկանիշ» (ԻԲՀ 1) և «գործողության անվանում» և «հատկանիշի անվանում» (ԻԲՀ 2) ԲԻ-ները:

6. Բայերի բառակազմական հնարավորությունների, ինչպես նաև դրանց ՏԲԲ-ների ուսումնասիրության քանակական վերլուծությունը կարելի է կատարել կիրառելով *բառակազմական ակտիվության k գործակցի* հաշվարկման բանաձևը, համաձայն որի բոլոր երեք լեզուներում այդ գործակիցն ավելի մեծ արժեք ունի ցավի նկարագրման բայերի ՏԲԲ-ում, այսինքն՝ **անզլերենում** ցավի արտահայտման բայերի ՏԲԲ-ում այն **5,4 է**, իսկ նկարագրման բայերի ՏԲԲ-ում՝ **6,8, հայերենում** համապատասխանաբար **5,8 և 7,1**, իսկ **ռուսերենում՝ 18,3 և 24,5**:

7. Ածանցյալների խոսքիմասային պատկանելության ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ անզլերենի և հայերենի ցավանիշ բայերի ՏԲԲ-ներում առավելապես ներկայացված են **առարկա և հատկանիշ** արտահայտող ԲԻ-ներ, մինչդեռ ռուսերենում բառակազմական աննախադեպ ակտիվություն է դրսևորվում հատկապես **բայերի** ածանցման գործընթացում՝ պայմանավորված այդ լեզվում բայակերտման մեծ հնարավորություններով: Լեզվաճանաչողական տեսակետից վերոնշյալ փաստերը կարող են վկայել այն մասին, որ էթե անզլերենի և հայերենի լեզվակիրների մոտ ցավ երևույթը (այդ թվում նաև դրա արտահայտումն ու նկարագրումը) առավելապես զուգորդվում է առարկայի և հատկանիշի հետ, ապա ռուսերենի լեզվակիրներն այն ավելի հակված են ընկալելու, արտահայտելու և նկարագրելու որպես գործողություն, գործընթաց և վիճակ:

8. Ենթակայական դերբայի գոյականական գործածությամբ պայմանավորված հայերենի ցավանիշ բայերի ՏԲԲ-ներում ընդհանրապես արտահայտված չէ **գործողություն կատարողի** ԲԻ-ը, որը թույլ է տալիս ենթադրել, որ էթե

անգլերենում և ռուսերենում հավասարապես կարևորվում են ցավի արտահայտումը/ նկարագրումը և արտահայտողը /նկարագրողը, ապա հայ լեզվամտածողության մեջ առավել շեշտվում են ցավի արտահայտումն ու նկարագրումը՝ անկախ դրանց իրականացնողից:

9. Երեք լեզուներում ցավանիշ բայերի երկու ենթախմբերի ներկայացուցիչների բառիմաստային առանձնահատկություններն արտացոլվում են նաև համապատասխան բառակազմական բների ծավալի և կառուցվածքի մեջ: Այսպես՝

- Անգլերենում **ցավի արտահայտման** բայերի կոնկրետ ԲԲ-ներում **գործողության կատարողը** միայն շնչավոր է՝ պայմանավորված սերող բայերի իմաստային առանձնահատկությունով (օր. *mourner, crier* և այլն), իսկ **ցավի նկարագրման** բայերի կոնկրետ ԲԲ-ներում **գործողություն կատարողը** կարող է լինել թե՛ շնչավոր, թե՛ անշունչ և թե՛ նույնիսկ վերացական երևույթ, ընդ որում, դա կարող է լինել ինչպես տարբերակված, այնպես էլ՝ ոչ (*cougher, strangler, sufferer* և այլն):
- Երեք լեզուների՝ ցավի արտահայտման բայերի ՏՏԲ-ներում որպես գործողության արդյունք է դիտարկվում դրա ընթացքում կամ հետևանքով առաջացած **ձայնը կամ վիճակը**, իսկ ցավի նկարագրման ՏԲԲ-ներում **գործողության արդյունքը** դրա ընթացքում կամ հետևանքով առաջացած **առարկան, զգացողությունը կամ վիճակն է**: Ընդհանուր օրինաչափությունից շեղվում են **«ցավ + ձայնի արձակում»** իմաստային ենթախմբին պատկանող բայերից սերված գոյականները, որոնք գործողության անվանմանը, ընթացքին զուգահեռ արտահայտում են նաև **«գործողության արդյունքում առաջացած ձայն»** իմակը, որ և դիտվում է իբրև **գործողության արդյունք**:
- Ջուզադրվող լեզուների ցավի **արտահայտման** բայերի ՏԲԲ-ին բնորոշ է **«գործողությանը ենթարկվելու հատկանիշ»** և **«գործողությանը ենթարկված, դրա արդյունք լինելու հատկանիշ»** ԲԲ-ներն արտահայտող ածականների սերումը, քանի որ ցավի արտահայտման առումով առաջին պլանում սուբյեկտն է, այսինքն՝ այն արտահայտողը: Հակառակ դրա, չնայած սերող բայերի անանցողականությանը, ցավի **նկարագրման** մի շարք բայերի կոնկրետ ԲԲ-ներում ածանցվում են **սուբյեկտ-օբյեկտային** հարաբերություններ արտացոլող վերոնշյալ ԲԲ-ները՝ պայմանավորված այն հանգամանքով, որ ցավի նկարագրման բայերի իմաստային կառուցվածքում առկա է **«կրել որևէ արտաքին ազդեցություն»** իմակը:
- Ուսումնասիրվող լեզուների՝ ցավի նկարագրման բայերի իմաստային կառուցվածքն ավելի հակված է դեպի գործողության կատարման բացասական արդյունքին/եղբին՝ պայմանավորված այս բայերի հիմնականում բացասական հարանշանակություններով, որոնք էլ հիմք են հանդիսանում, որ այս բայերի ՏԲԲ-ներում ներկայացված լինեն 1) **«գործողության կամ նրա ոչ ձիշտ կատարման միջոցով հանգել կամ հանգեցնել որևէ մեկին / մի բան անցանկալի հետևանքների»** և 2) **«գործողության միջոցով ձերբազատվել, խուսափել ինչ-որ բանից»** ԲԲ-ները, ի տարբերություն ցավի արտահայտման բայերի ՏԲԲ-ներին բնորոշ դրանց դրական տարբերակների՝

համապատասխանաբար՝ 1) «գործողության միջոցով նորմալացնել, բարելավել իր կամ մեկ ուրիշի վիճակը, ձեռք բերել գոհության, բավարարվածության զգացողություն» և 2) «գործողության միջոցով ձեռք բերել, գտնել ինչ-որ բան, հասնել մի բանի, միանալ ինչ-որ բանի»:

10. Կատարված ուսումնասիրության համաձայն՝ ցավի լեզվական կարգայնացումը կարելի է կատարել երկու ուղղությամբ՝ ա) իմաստաբանական (ազատ զուգորդումների մեթոդով) և բ) բառակազմական (ՏԲԲ-ների հիման վրա): Ընդ որում, երկու դեպքում էլ առանձնացվում են ցավի կարգի ճանաչողական հատուկ կարգավիճակ ունեցող անդամները՝ ըստ **«կարգի լավագույն օրինակ լինելու»** (GOE - Goodness - of - Exemplar Rating) հատկանիշի:

11. Բառակազմության մեջ կարգայնացման հիմնական չափանիշ են ծառայում երեք տիպային միավորները, որոնց հիման վրա ձևավորվում է բառակազմական հիմնատիպի աստիճանակարգումը՝ կազմված 1) **բարձրագույն** (ՏԲԲ), 2) **միջին կամ հիմնական** (ԻԲՀ-ներ) և 3) **ստորին** (ԲԿ-եր) մակարդակներից:

12. Երեք լեզուներում իմաստաբանական և բառակազմական կարգայնացումները դրսևորում են ակնհայտ նմանություններ՝ կապված կարգի կենտրոնական, միջին և ծայրամասային անդամների եռալեզու և երկլեզու համընկնումների հետ: Ընդ որում, անախադեպ համապատասխանություն է նկատվում նաև դրանց քանակական ցուցանիշներում: Ըստ այդմ, եթե եռալեզու համապատասխանությունները վկայում են ցավի՝ որպես մարդու հիմնական զգացողություններից մեկի համընդհանուր, համամարդկային կարգավիճակի մասին, ապա երեք լեզուների ՏԲԲ-ներում չլրկնվող ԲԻ-ների առկայությունը խոսում է ցավի ընկալման, ճանաչման, արտահայտման և նկարագրման ազգային և լեզվական պայմանավորվածության մասին: Ընդ որում, եռալեզու և երկլեզու ԲԻ-ները կարելի է դիտարկել որպես ոչ միայն զուտ լեզվական, այլև ճանաչողական ընդհանրություններ:

13. Ամփոփելով անգլերենի, հայերենի և ռուսերենի ցավանիշ բայերի բառիմաստային խմբի հետազոտության արդյունքները՝ կարելի է առանձնացնել ցավի կարգի հատկանիշների հիմնատիպային բազային հավաքակազմը, համաձայն որի՝ ցավը խիստ անձնավորված սուբյեկտիվ, միևնույն ժամանակ նաև համընդհանուր, համամարդկային կենսահանրահոգեբանական զգացողություն է, որը կարող է լինել ա) ֆիզիկական և/կամ հոգեկան, բ) պատճառաբանված, գ) ուժգնության աստիճանով օժտված, դ) որոշակիորեն տեղայնացված, ե) հարձակվող, ներխուժող, հոգս և տանջանք պատճառող գ) մարդուն կախվածության մեջ պահող, է) իր իսկ նկատմամբ սեր / վախ / զզվանք հարուցող, ը) տանելի, թեթևացող, հաղթահարվող և թ) արտահայտելի երևույթ:

Ատենախոսության վերջում տրված են օգտագործված գրականության ցանկը, համառոտագրությունների ցանկը, ինչպես նաև 7 հավելվածներ, որտեղ ներկայացված են հետազոտության գործնական արդյունքները:

Ատենախոսության հիմնադրույթներն արտացոլված են հետևյալ հրապարակումներում.

1. Անգլերենի, հայերենի և ռուսերենի ցավանիշ բայերի իմաստային առանձնահատկությունների զուգադրական վերլուծություն, «Կանթեդ» գիտական հոդվածների ժողովածու, - Եր.: Ասողիկ, 2012, Գ.2(51). - էջ 38-48:

2. Ցավի լեզվական կարգայնացումը (անգլերենի, հայերենի և ռուսերենի նյութի հիման վրա), «Կանթեդ» գիտական հոդվածների ժողովածու, - Եր.: Ասողիկ, 2012, Գ.4(53). - էջ 61-68:

3. Ցավի լեզվականացման խնդիրը տարբեր գիտակարգերում, Մասնագիտական կրթության որակի ապահովման արդի հիմնախնդիրները: Միջազգային գիտաժողովի նյութեր: 17-18 մայիսի, 2012թ. Հյուսիսային համալսարան. - Եր.: Հյուսիսային համալսարան, 2012. - էջ 549-559:

4. Сопоставительный анализ словообразовательных гнезд болевых ощущений английского, русского и армянского языков, «Научная дискуссия: вопросы филологии, искусствоведения и культурологии»: материалы V международной заочной научно-практической конференции. (8 октября 2012г.) – Москва: Изд. «Международный центр науки и образования», 2012. – сс. 121-125:

5. Ցավի զգացողության արտահայտման բայերի բառակազմական բների զուգադրական վերլուծություն (անգլերենի, հայերենի և ռուսերենի նյութի հիման վրա), «Հայագիտական հանդես» ամսագիր, - Եր.: ՀՊՄՀ, 2013, դ.1-2(21-22). - էջ 32-40:

6. Структурный анализ типового словообразовательного гнезда глаголов выражения боли (на материале английского, армянского и русского языков), «Ժամանակակից գիտություն. զարգացման միտումները, խնդիրներն ու հեռանկարները» միջազգային ասպիրանտական համաժողովի նյութեր (23-25 սեպտեմբերի, 2013 թ.), Հայ-ռուսական համալսարան, - Եր., 2013. - էջ 156-160:

Джагацпаян Роза Валериковна

Лингвокогнитивный анализ словообразовательных гнезд глаголов боли в английском языке в сопоставлении с армянским и русским

Диссертация на соискание ученой степени кандидата филологических наук по специальности 10. 02. 03 - «Сравнительное и типологическое языкознание».

Защита состоится 27-го января 2014 года в 15⁰⁰ часов, на заседании специализированного совета по Лингвистике 019 ВАК при Институте Языка имени Р. Ачаряна НАН РА. (по адресу: 0015, г. Ереван, ул. Григора Лусаворича 15).

РЕЗЮМЕ

Одним из актуальных направлений развития современного языкознания является исследование проблемы языковой категоризации, которое находится в полном соответствии с основной проблематикой когнитивной лингвистики 20-21-ого вв. В этом контексте особую значимость приобретает проведение наряду с семантической и словообразовательной категоризации определенных явлений, фактов окружающей действительности с помощью имеющих прогностический характер комплексных единиц словообразования, в частности, словообразовательного гнезда (СГ).

Данная диссертационная работа представляет собой исследование в области языковой категоризации *боли* в таких дальнеродственных индоевропейских языках, какими являются английский, армянский и русский.

Материалом исследования послужили непроизводные глаголы *боли*, а также их производные в английском, армянском и русском языках. Значение *боли* определяется как выражение или описание *боли* субъектом.

Актуальность настоящего исследования обусловлена тем, что, несмотря на несомненный интерес, который категория “боль” представляет для когнитивной науки, чисто лингвистические исследования в этом направлении единичны и отражают лишь частные аспекты изучения проблемы. Что касается анализа словообразовательных возможностей непроизводных глаголов данной лексико-семантической группы (ЛСГ) в трех языках, то в настоящей работе он предпринимается впервые.

Целью работы являются семантическая и словообразовательная категоризация феномена *боли* на основе анализа СГ непроизводных глаголов. Для достижения данной цели были поставлены следующие конкретные **задачи**: 1) выявить и разграничить ЛСГ глаголов боли в английском, армянском и русском языках, 2) построить конкретные и типовые СГ глаголов данной ЛСГ в трех языках, а также обобщенное типовое СГ глаголов “боли” исследуемых языков, 3) провести языковую категоризацию *боли* методом словообразовательного моделирования, 4) выявить базовый комплект прототипических свойств общечеловеческой категории *боль*.

Научная новизна исследования. В работе впервые выявляется и разграничивается ЛСГ глаголов *боли* в английском, армянском и русском языках. Также впервые структурируются конкретные и типовые СГ данных глаголов и исследуется степень зависимости деривационной активности и потенциала производящих баз от их категориального и лексического значения. Впервые проводится языковая категоризация *боли* с помощью метода словообразовательного моделирования. В диссертации впервые вводится понятие и предлагается формула вычисления *коэффициента словообразовательной активности*. С помощью категоризации *боли* впервые определяются ее прототипические свойства в исследуемых языках. Далее для трех языков выявляются общие когнитивно значимые словообразовательные универсалии.

Теоретическая значимость исследования. Настоящая диссертационная работа вносит определенный вклад в разработку принципов и методов языковой категоризации, проводимую в сопоставительном аспекте на материале одного, двух и более языков, в частности, словообразовательной категоризации с помощью словообразовательных прототипов. Результаты данного исследования представляют интерес для дальнейшего изучения когнитивного словообразования как автономного раздела когнитивной лингвистики. Таким образом, работа имеет определенную теоретическую значимость как для частного, так и для общего и типологического языкознания.

Практическая ценность исследования обусловлена тем, что его результаты могут быть применены в вузовских курсах по когнитивной лингвистике, лексикологии, словообразованию и сопоставительной типологии английского, армянского и русского языков, а также при составлении практических пособий и словарей, в частности, словообразовательных словарей одного и более языков.

Структура работы. Диссертация состоит из введения, четырех глав, заключения, библиографии, списка условных сокращений и семи приложений.

Во введении обосновывается выбор темы, определяются основная цель и конкретные задачи исследования, его актуальность.

Первая глава, озаглавленная “ЛСГ глаголов боли в английском, армянском и русском языках (семантический аспект)”, состоит из двух параграфов. В главе проводится краткий анализ многочисленных подходов к решению проблемы классификации глагольной лексики, а также предлагаются несколько принципов классификации глаголов *боли* в исследуемых языках. Данная ЛСГ подразделяется на две большие группы – 1) глаголы *выражения боли* и 2) глаголы *описания боли*. В свою очередь, глаголы *описания боли* формируют 3 подгруппы: глаголы описания а) физической; б) физической и душевной, в) душевной боли.

Вторая глава диссертации, озаглавленная “Словообразовательные возможности глаголов выражения боли в английском, армянском и русском языках”, состоит из пяти параграфов, первый из которых посвящен анализу когнитивного аспекта современных исследований в сфере словообразования с учетом факта когнитивной обусловленности трех основных комплексных единиц системы словообразования – словообразовательной категории (СК), словообразовательной парадигмы (СП) и словообразовательного гнезда (СГ). В последующих параграфах представляются результаты структурирования СГ глаголов *выражения боли* в каждом из исследуемых языков, а также обобщенное типовое СГ глаголов *боли* трех языков.

Третья глава, озаглавленная “Словообразовательная активность и потенциал глаголов описания боли в современном английском, армянском и русском языках”, состоит из четырех параграфов. В главе представляются результаты формирования конкретных и типовых СГ глаголов вышеуказанной подгруппы исследуемых языков, а также их сопоставительное изучение.

Четвертая глава диссертации, озаглавленная “Словообразовательно-семантический анализ глаголов боли в контексте теории прототипов”, состоит из трех параграфов, первый из которых посвящен детальному анализу одной из основных концепций категоризации - теории прототипов Э.Рош. В параграфе также обсуждается проблема применения теории прототипов в словообразовании. В последующих параграфах предпринята попытка проведения семантической и словообразовательной категоризации *боли* в исследуемых языках.

В заключении приводятся основные выводы и результаты, полученные в работе.

Roza V. Jaghatspanyan

Contrastive Linguo-Cognitive Analysis of Derivational Word-Clusters of the English, Armenian and Russian Verbs Denoting Pain

Thesis for the degree of candidate of philological sciences, specialty 10.02.03-“Comparative and Typological Linguistics”

The defense of the thesis will be held at 15⁰⁰, on January 27, 2014, at the session of the Specialized Council on Linguistics 019 HAC (Higher Attestation Commission) in the H. Acharian Institute of Language of NAS RA (Address: 15, G. Lusavorich Str., 0015 Yerevan, Armenia).

SUMMARY

One of the current trends in modern linguistics is the study of language categorization. This approach completely corresponds to the basic perspectives of the 20th - 21st centuries Cognitive Linguistics. In this respect of special importance is semantic as well as derivational categorization of certain phenomena of reality conveyed by means of derivational word-clusters — complex units of predictive character.

The present thesis represents a research in the field of semantic and derivational categorization of *pain* in the English, Armenian and Russian languages.

The object of the research is the study of the English, Armenian and Russian root verbs denoting *pain* as well as their derivatives. The meaning of the category of *pain* is defined as *expression* or *description* of *pain* by the agent.

The topicality of the research. Though the concept of *pain* and the problem of its representation have been broadly discussed from the angles of both theoretical and practical perspectives in different domains of the Cognitive Science, nevertheless, few investigations have been carried out in the field of Cognitive Linguistics. As for the study of the derivational potential of the root-verbs denoting *pain* in the English, Armenian and Russian languages, the research under consideration is the first exploration of the kind.

The aim of the research is the language categorization of *pain* in English, Armenian and Russian on the basis of the structural and semantic analyses of derivational word-clusters of the corresponding root verbs.

To achieve the aim of the research the following **objectives** are set forth: 1) to determine and single out the semantic group of *pain* verbs in English, Armenian and Russian, 2) to form derivational word-clusters of *pain* verbs in the English, Armenian and Russian languages separately, as well as the generalized word-cluster of *pain* verbs of the above-mentioned languages, 3) to categorize the concept of *pain* in English, Armenian and Russian by means of the method of derivational modelling, 4) to form the basic set of the prototypical features of the universal category of *pain*.

The scientific novelty of the research. For the first time the semantic group of *pain* verbs in the English, Armenian and Russian languages is distinctly singled out and analyzed semantically. In the languages under study the derivational word-clusters of *pain* verbs are formed, and the interrelation of the derivational activity and potential of the root *pain* verbs and their categorial and lexical meanings is revealed. The notion and the formula of the *word-formation activity coefficient* calculation is introduced and applied. On the basis of

categorization the prototypical features of the universal category of *pain* are defined. For the languages under study cognitively relevant derivational universals are revealed.

The theoretical significance of the research. The results of the given research may contribute to the further development of the principles and mechanisms of language categorization, in particular contrastive-typological categorization by means of derivational prototypes. The results of the research may be of certain importance for the further investigations of Cognitive Word-Formation as an independent part of Cognitive Linguistics.

The practical value of the research. The results of the research may have a number of practical applications: they can be applied in the courses of Cognitive Linguistics, Lexicology, Word-Formation, Contrastive Typology of the English, Armenian and Russian languages, as well as in compiling manuals, mono- and multilingual dictionaries.

The structure of the research. The structure of the thesis flows from the issues touched upon in the research. It consists of an introduction, four chapters, a conclusion, a bibliography, a list of abbreviations and seven appendices.

Introduction presents the subject-matter, the topicality, the aim and main objectives of the research.

Chapter One, entitled “**The English, Armenian and Russian Verbs Denoting Pain (Semantic Aspect),**” consists of two paragraphs. The chapter presents different approaches to the problem of the verb classification. In the investigation certain ways of the *pain verbs* classification are suggested, namely 1) verbs *expressing pain* and 2) verbs *describing pain*, taking into account that *description* can refer to a) physical, b) physical and psychic, c) psychic *pain*.

Chapter Two, entitled “**Derivational potential of the English, Armenian and Russian Verbs expressing pain,**” consists of five paragraphs. In the first one the analysis of the cognitive aspect of modern Word-Formation is represented. In this respect of special importance are three complex units of Word-Formation: derivational category, paradigm and word-cluster. In the next four paragraphs the general derivational word-clusters of *pain* verbs are formed in the English, Armenian and Russian languages separately, as well as the generalized word-cluster of *pain* verbs of the above-mentioned languages.

Chapter Three is entitled “**Derivational potential of the English, Armenian and Russian Verbs describing pain**”. The four paragraphs of the chapter are devoted to the description and contrastive analysis of the formed derivational word-clusters of verbs *describing pain* in the languages under study.

Chapter Four, entitled “**Derivational and Semantic Analysis of the Pain Verbs in the Light of the Prototype Theory,**” consists of three paragraphs. The first of them thoroughly presents one of the main theories of language categorization - the Prototype Theory by E. Rosch. The main principles of the above-mentioned theory are applied to the investigation of derivational peculiarities of *pain* verbs in the three Indo-European languages.

In the chapter semantic and derivational categorization of *pain* in the English, Armenian and Russian languages is carried out according to the three main - superordinate, basic and subordinate - levels of conceptualization.

The conclusion presents the main findings of the research.

